

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ԱՀ ֆինանսների նախարարության 2019 թվականի հոկտեմբեր ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

#### Ընթացիկ աշխատանքներ

Նախնական տվյալներով 2019 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 48716.2 մլն դրամ՝ պլանավորված 45650 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 6.7 տոկոսով կամ 3066.2 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 10.7 տոկոսով կամ 4711 մլն դրամով:

Հոկտեմբեր ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 4564.6 մլն դրամ՝ պլանավորված 4350.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 4.9 տոկոսով կամ 214.6 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 12.3 տոկոսով կամ 499.7 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 177 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 12 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 28 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 18.8 մլն դրամի չափով հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 21 ստուգում՝ 18.6 մլն դրամ գումարով:

«Հարկային համակարգի բարեփոխումների» հայեցակարգի շրջանակներում իրականացված հսկողական միջոցառումների արդյունքում արձանագրվել են ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների թերհայտարարագրման 4 և ապօրինի ձեռնարկատիրական գործունեության իրականացման 1 դեպքեր:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 79 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 49-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 5-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 8-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման և 17 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան են ներկայացվել բռնագանձման հայցերով 20 գործ՝ 70933.4 հազ. դրամ գումարով և վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ թվով 7 հայցադիմում՝ 279 հազ. դրամ գումարով:

Նույն ժամանակահատվածում ավարտվել է վճարման կարգադրության հայցերով 7 գործ՝ 177 հազ. դրամ գումարով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 106 վարչական գործով սահմանվել է 1.3 մլն դրամ վարչական տուգանք:

Հոկտեմբեր ամսում հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովին է ներկայացվել 1 դիմում-գանգատ, որը օրենսդրությամբ սահմանված կարգով մերժվել է:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 12223 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 10763:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 60 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում հոկտեմբեր ամսում կատարվել է վերադարձ 176 վարձու աշխատողի՝ 28.3 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով հաշվետու ամսում գործունեությունը նոր սկսող 38 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Ֆինանսների նախարարի հրամաններով սահմանվել են «Մասնակիցների ռեեստրը վարողի կողմից Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությանը հատուցման դեպքի առկայության փաստի մասին տեղեկացնելու կարգը», «Բիլինգային համակարգ կիրառող անձի կողմից հարկային հաշիվների սերիա-համարների ստացման էլեկտրոնային հայտի» և «Հաշվապահական հաշվառման կամ հարկային հաշիվներ դուրս գրող այլ ծրագրերում լրացված տվյալների՝ էլեկտրոնային հարկային հաշիվների ծրագիր ներմուծման, այդ ծրագրից հաշվապահական հաշվառման կամ հարկային հաշիվներ դուրս գրող այլ ծրագրեր տվյալների արտահանման» ձևաչափերը, ինչպես նաև «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքից բխող միջոցառումների կազմակերպման ընթացակարգերն ու փաստաթղթերի օրինակելի ձևերը: Նախարարի հրամանով փոփոխություններ են կատարվել «Գույքահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգում և «Հարկային մարմնի ներքին փաստաթղթաշրջանառության կանոնակարգման մասին» հրամանում:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը և տրվել առաջարկություններ:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում նախարարության երեք աշխատակիցներ մասնակցել են ՀՀ ՊԵԿ ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

Հաշվետու ամսվա ընթացքում երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

### **Հասարակայնության հետ կապ**

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30.1-ին հոդվածով սահմանված կարգով կայքում հրապարակվել է առաջին 300 խոշոր հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկը:

Հոկտեմբերի 28-ին հարկային մարմնում կայացել է հարկային ծառայության «Գ» և «Դ» խմբերի թափուր պաշտոններ զբաղեցնելու համար փակ և բաց մրցույթների առաջին փուլը, որի արդյունքում 14 դիմորդ հնարավորություն են ստացել մասնակցելու նոյեմբերի 7-ին կայանալիք կրկնակի փակ և բաց մրցույթներին:

Հոկտեմբեր ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 532, ելքագրվել՝ 400 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 3 գրություն, որից 1-ը՝ էլեկտրոնային եղանակով: